ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/131

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6» ծածկագրով գնանշման հարցում, վարժեցված շների կերի և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13090-2019 գրությամբ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.08.2019թ. թիվ 1/18-2/43909-2019 գրության հիման վրա, 06.08.2019թ. «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 06.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 14.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 14.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.09.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.08.2019թ. թիվ 1/18-2/43909-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Հայկ Մարտիրոսյան-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2019 թվականի հունիսի 10-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1 ծածկագրով գնման Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված գնման ժամանակացույցի համաձայն Վաճառողը պարտավորվել է մատակարարել 1-ին չափաբաժնի մասով 1250 կգ. <<MONGE ENERGY>>, 2-րդ չափաբաժնի մասով 800 կգ. <<MONGE MEDIUM STARTER>> և 3-րդ չափաբաժնի մասով 700 կգ. <<MONGE PUPPI AND JUNIOR>> ապրանքատեսակի չոր կեր: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 12.06.2019թ-ին և Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանված առաջին չափաքանակների համար՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օր (01.07.2019թ. ներառյալ), իսկ մյուս մասի համար՝ ըստ պատվիրատուի բանավոր պահանջի՝ 5 օրացուցային օր:

Պայմանագրով սահմանված ժամկետում՝ 19.06.2019թ-ին Գնորդին մատակարարվել է 1-ին չափաբաժնի մասով 240 կգ. <<MONGE ENERGY>> ապրանքատեսակի չոր կեր, իսկ մյուս մասով և 2-րդ ու 3-րդ չափաբաժինների մասով

ընդհանրապես մատակարարում չի իրականացրվել, և Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված 2019 թվականի օգոստոսի 1-ից միակողմանի մասնակի լուծել է 2019 թվականի հունիսի 10-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.08.2019թ. գրությամբ դիմել է «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13090-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/131 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված գնման ժամանակացույցի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է մատակարարել 1-ին չափաբաժնի մասով 1250 կգ. «MONGE ENERGY», 2-րդ չափաբաժնի մասով 800 կգ. «MONGE MEDIUM STARTER» և 3-րդ չափաբաժնի մասով 700 կգ. «MONGE PUPPY AND JUNIOR» ապրանքատեսակի չոր կեր:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 12.06.2019թ.-ին և Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանված առաջին չափաքանակների համար՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օր (01.07.2019թ. ներառյալ), իսկ մյուս մասի համար՝ ըստ պատվիրատուի բանավոր պահանջի՝ 5 օրացուցային օր:

Պայմանագրով սահմանված ժամկետում՝ 19.06.2019թ.-ին Գնորդին մատակարարվել է 1-ին չափաբաժնի մասով 240 կգ. «MONGE ENERGY» ապրանքատեսակի չոր կեր, իսկ մյուս մասով և 2-րդ ու 3-րդ չափաբաժինների մասով մատակարարում չի իրականացրվել:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի մասնակի լուծել է 2019 թվականի հունիսի 10-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով գնման պայմանագիրը ինչի մասին 31.07.2019թ.-ին հրապարակում է կատարվել գնումների պաշտոնական տեղեկագրում և նույն օրը պատշաճ ծանուցել է «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 31.07.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի միջև 10.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից 31.07.2019թ.-ից միակողմանի մասնակի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13090-2019 գրությամբ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է

պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ի

կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 31.07.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ. թիվ 26/26-1/13090-2019 գրությամբ «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**